ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 հունվարի 2023թ. թիվ 27

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ, Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ի.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ԵՎ Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԴԵԲԵԴ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով գործուղման առաջադրանքները՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Մերի Դալլաքյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Իրինա Մարտիրոսյանին և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյանին ս/թ հունվարի 18-ին մեկ օրով գործուղել Դեբեդ՝ Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում կանանց դերի բարձրացման, արժանապատիվ աշխատանքային պայմաններով ապահովելու և ընդհանրապես կանանց հավասար իրավունքների վերաբերյալ ինտերակտիվ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

17/01/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2023թ. հունվարի 17
ք.Վանաձոր